

մէջ Օսմանլի հռչակեալ անունը կը կրէ՝
եւն: Կարմիրքի «Firengi հոս կաթողիկեայ
(Katholik) մտօք հասկնալու է» (Քոխ,
էջ 57—58): Հայ է նոյնպէս Արարիկն:
Ճորոխի երկու ափանց վրայ՝ այս ամբողջ
զուտ հայ գիծը բաւական մեծ բնակչու-
թիւն ունի: Մնացեալ ձորերէն՝ մաս մը
խառն բնակչութիւն ունի հայ-քրիստոնեայ
եւ հայ-մահմետական (գլխաւորաբար Նի-
խաղ, Որջնհաղ, Կիսկիմ, Փրթիկներ եւն,
այժմ նաեւ Արսիս): Միւսները զժբախ-
տաբար լիովին մահմետականացած են:

Կիսկիմ (հին Բերդագրակ) գաւառի
այս մահմետականացումն ալ տեղի ունե-
ցած է ԺԸ դարուն վերջերը: Ինձիճեանի
գրած ատեն Բերդագրակի եկեղեցիները տա-
կաւին կանգուն էին. եւ ձորի մը բնակիչք
«նորոգ տաճկացան» (էջ 133): Նոյնպէս
սլատմած էին Քոխի նոյն իսկ մահմետա-
կանացածները: Գաւառիս այս մահմետա-
կանք, կ'ըսէ, ԺԸ դարուն վերջերը տակաւին
քրիստոնեայ էին. եւ գաւառին կիսանկախ
իշխանը՝ ինկած էր հաւատոց համար լղած
կռուին մէջ. որդին՝ մանուկ տիօք Կ. Պո-
լիս տարուած՝ մահմետական կրթուած էր
եւ դարձած իւր հայրենի իշխանութեան: